

**ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ԵՎՐՈՊԱՅԻ ՔՈԼԵՋԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ**

**Եվրոպայի քոլեջի** շրջանավարտների հայաստանյան ասոցիացիան «Շրջանավարտների դեսպանության ծրագրի» շրջանակներում սիրով հրավիրում է ձեզ մասնակցելու Եվրոպական քոլեջի ակադեմիական և կրթաթոշակային ծրագրերի ներկայացմանը նվիրված առցանց հանդիպմանը:

**Օրը՝ 30.11.2020**

**Ժամը՝ 14:00**

Հանդիպմանը կարող են մասնակցել Ակադեմիայի մագիստրանտները և ասպիրանտները:

Հանդիպմանը գրանցվելու համար հարկավոր է մինչև ս.թ. **նոյեմբերի 29-ն** ուղարկել մասնակցի անունը և ազգանունը, բաժինը և կուրսը [tatevikmovsisyan@paara.am](mailto:tatevikmovsisyan@paara.am) էլեկտրոնային հասցեին: Գրանցումից հետո ձեզ կտրամադրվի հանդիպման հղումը:

**Եվրոպայի քոլեջի մասին**

Եվրոպայի քոլեջի երկու մասնաճյուղերը տեղակայված են Բելգիայում՝ Բրյուզելում, և Լեհաստանում՝ Նատոլինում (Վարշավա): Քոլեջը տրամադրում է մագիստրոսական կրթություն Եվրոպական ուսումնասիրությունների ոլորտում տարբեր մասնագիտացումներով:

*2021-2022 ուսումնական տարվա համար դիմումներն ընդունվում են մինչև 2021թ. հունվարի 13-ը:*

**Հանդիպման ընթացքում կներկայացվեն**

- ✓ Քոլեջի ակադեմիական ծրագրերը,
- ✓ ընդունելության կարգը և պահանջվող փաստաթղթերը,
- ✓ ամբողջական կրթաթոշակ ստանալու անհրաժեշտ պահանջները,
- ✓ Քոլեջի ընձեռած ակադեմիական և հետագա կարիերայի հնարավորությունները,
- ✓ Քոլեջում մեկ ակադեմիական տարվա ուսման վերաբերյալ այլ մանրամասներ:

Միջոցառումը կվարի Եվրոպայի քոլեջի 2020 թվականի շրջանավարտ, Քոլեջի շրջանավարտների 2020 թվականի հայաստանյան ներկայացուցիչ **Անժելա Մնացականյանը**:

Հանդիպմանը տեղեկացված և կոնկրետ հարցերով ներկայանալու համար Եվրոպայի քոլեջին կարող եք ծանոթանալ այստեղ<sup>1</sup>: Ըստ երկրների տրամադրվելիք կրթաթոշակներին կարող եք ծանոթանալ այստեղ<sup>2</sup>: Եվրոպական հարևանության քաղաքականության երկրների բուհերի շրջանավարտներին տրամադրվելիք կրթաթոշակներին կարող եք ծանոթանալ այստեղ<sup>3</sup>:

---

<sup>1</sup> <https://www.coleurope.eu/>

<sup>2</sup> <https://www.coleurope.eu/admission/scholarships/scholarships-country>

<sup>3</sup> <https://www.coleurope.eu/admission/scholarships/scholarships-university-graduates-coming-european-neighbourhood>